

ԳԵՐԱՆՎԱՆ ԱՃԱՌՅԱՆԱԿԱՆ ԸՄՌՈՆՈՒՄԸ

(Մենդյան 120-ամյակի առթիվ)

Խ. Գ. ԲԱԴԻԿՅԱՆ

Մեր ժամանակների ամենաբեղմնավոր ու ամենամեծ հայագետ-լեզվաբան, Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ, Չեխոսլովակիայի Արեւիկյան ինստիտուտի գիտական բաժնի թղթակից անդամ, Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Աճառյանը իր ապրած կյանքի 77 տարիներից 65-ը նվիրաբերել է լեզվաբանական գիտություններին, մասնավորապես հայագիտությանը: Նրա աշխատություններից շատերը համաշխարհային ճանաչման են արժանացել:

Իր ծննդավայրի՝ Սամաթիայի (Կոստանդնուպոլիս) Արամյան դպրոցում սովորելիս 12 տարեկան Հրաչյան ազատ գրում-կարդում էր հայերեն, ֆրանսերեն, անգլերեն, հունարեն, եբրայերեն, թուրքերեն: Գրաբարը այնքան լավ էր յուրացրել, որ աշխարհաբարի էր թարգմանել Խորենացու, Ասողիկի, Ղևվոնդի և ուրիշ պատմիչների գործերը: Ակնառու է, որ դեռ մանուկ հասակից Աճառյանը լեզուների նկատմամբ արտակարգ հակում է ցուցաբերել, որն ավելի է խորացրել Սորբոնի համալսարանում 4 տարի և Ստրասբուրգում մեկ կիսամյակ սովորելու ընթացքում: Հենց դա էլ հիմք հանդիսացավ, որ նա գիտական ամենաբարձր մակարդակով ու վիրտուոզության հասնող ճշտությամբ ուսումնասիրեր լեզվաբանության գրեթե բոլոր հիմնահարցերը: Եվ, իսկապես, շկա հայերենի ուսումնասիրության մի բնագավառ, որտեղ Աճառյանն իր հիմնավոր խոսքն ասած չլինի. նա հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայոց լեզվի փորձառական հնչյունաբանության ուսումնասիրության գիտաճյուղերի հիմնադիրն է, որոնք հիմնավորապես մտել են բարձրագույն դպրոցների ուսումնական պլանների մեջ: Անգնահատելի է նրա վաստակը հայ բառարանագրության, հայերենի արմատների պատգաբանության, հայերենի օնոմաստիկայի երկու հիմնական շերտերի՝ անթրոպոնիմիկայի (անձնանուններ) և տոպոնիմիկայի (տեղանուններ) ստուգաբանության, հայերենի համեմատական ու պատմական քերականության, հայերենի տիպաբանական-դուզադրական հետազոտության և բազմաթիվ այլ բնագավառներում: Աճառյանը ընդհանուր և համեմատական լեզվաբանության խոշոր մասնագետ է, նշանավոր արևելագետ, լազերեն լեզվի առաջին ուսումնասիրողը: Աճառյանը իր ավանդն է մուծել նաև հայ ժողովրդի, նրա մշակույթի ու գրականության, հայ գաղթավայրերի պատմության, հայ բանասիրության հարցերի ուսումնասիրության բնագավառում:

Աճառյանի այդ հսկա գիտական ժառանգությունը, որը գերազանցում է մի քանի տասնյակ գիտաշխատողներից կազմված մեկ գիտական հաստատության տասնամյակների աշխատանքին, ամփոփված է նրա՝ թվով 247 մեծ

ու փոքր գիտական աշխատություններում, որոնց էջերի թիվը անցնում է 30 հազարի սահմանները՝ շահաված մի քանի տասնյակից անցնող ձեռագրերը. և այդ բոլորը կատարված գիտական ամենաբարձր մակարդակով և պարտաճանաչության նախանձելի զգացումով:

Հրաշյա Աճառյանի կոթողային աշխատությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում 10 մեծադիր հատորներից բաղկացած «Լիակատար քերականություն հայոց լեզվի» (համեմատություն մարտի 562 լեզուների)՝ աշխարհում նմանը չունեցող մենագրությունը, որի 2-րդ հատորը ամբողջությամբ նվիրված է 'Իեբրաեան խոսքի մասին: Այստեղ Աճառյանը իրեն հատուկ մանրակրկիտությամբ ու բազմակողմանիորեն քննել է հայերենի դերանունը իր պատմական զարգացման ընթացքում՝ ընդհանուր լեզվաբանական ֆոնի վրա: Այսինքն՝ ինչպես լեզվաբանական գրեթե բոլոր հարցերն ու իրողությունները, այնպես էլ դերանունները, Աճառյանը նախ քննում է ընդհանուր լեզվաբանական մոտեցմամբ, այնուհետև հնդեվրոպական (և ոչ միայն հնդեվրոպական) լեզուների համեմատական սովյալներով, ապա նույն երեւոյթը՝ հայերենում (պատմական զարգացման գործընթացում) զբաբար, միջին հայերեն, բարբառներ և ժամանակակից հայերեն հերթականությամբ (ներառելով վերջինիս երկու ճյուղերը՝ արևելահայ և արևմտահայ):

Ինչպես իրավացիորեն նշում են լեզվաբանները, դերանունը խոսքի մասերից ամենաբարդն է իր դրսևորումների բազմազանության, իմաստային առանձնահատկությունների, կիրառությունների բազմակողմանիության, ինչպես նաև ձևաբանական հատկանիշների տեսակետից ու քերականական կարգերի յուրահատուկ դրսևորումների առումով:

Ստորև մենք կներկայացնենք Աճառյանի՝ դերանվան ըմբռնումն ու զրնահատումը այն հաջորդականությամբ, ինչպես քննել է նրանկատ լեզվաբանը:

Աճառյանին ամենից առաջ հետաքրքրում էր դեբրաեանցեի ծագման հարցը: Հայտնի է, որ փիլիսոփաների ու լեզվաբանների մի մասը խոսքի մասերի ծագման առաջնությունը տալիս էին դերանվանը: Օրինակ, Հումբոլդտը լեզուն դիտելով որպես անհատական երևույթ, առաջնությունը տալիս էր ԵՄ-ին՝ անհատականին, այսինքն՝ դերանվանը: Նույն կարծիքին էին Կ. Պավսկին, Մառը, Ի. Դավիդովը և էլի ուրիշներ: Մինչդեռ Աճառյանը իրավացիորեն նկատում էր, որ նախ պետք է լիներ մարդը՝ գոյականը, ապա նոր ԵՄ-ը՝ անհատականը, և շատ որոշակիորեն նշում է դերանվան փոխառիման պաշտոն (ֆունկցիա) կատարելը. այդ է ցույց տալիս նաև նրա անվանումը՝ հունարեն տերմինը— antonymia, որը պատճենվել է հնդեվրոպական շատ լեզուներում՝ լատ. pro-nomen, ֆր. pronem, անգլ. pronoun, սլավ. местоимение, հայ. դեբրաեան (անվան դեր կատարող): Դերանունը այդպես է դիտարկել դեռևս հույն հայտնի քերական Դիոնիսիոս Թրակացին (II—I դար մ. թ. ա.). «Դերանունություն է բառ փոխանակ անուան առեալ...»:

Աճառյանն էլ դերանունը քննադրում է հին քերականների նման՝ ելնելով նրա փոխարինման հատկանիշից և նշում է, որ այդպես են գտնում նաև իր ժամանակի քերականները. «Արդի քերականների սովորական սահմանումով,— գրում է Աճառյանը,— դերանունը այն բառն է, որը գործ է ածվում նախապես հիշված մի գոյականի փոխարեն նույնը շարունակելու նպատակով: Օրինակի համար՝ Մեսրոպը հայ գրականության հիմնադիրն է: Նա ծնվել է Տարոնի Հացեկաց գյուղում: Նրա ժամանակ Հայոց թագավորն էր

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 27:

Վոսմշապուհը: Այստեղ նա և նրա դերանուններն են, որոնք դրված են Մեսրոպ բառի փոխարեն»²:

Սրանից ելնելով էլ ընդունելի կարելի է համարել Աճառյանի այն ենթադրությունը, թե՛ «Դերանունները նախապես գոյականներ էին, որոնք հետո գործածության մեջ շարունակ մաշվելով, դարձան կրճատ, անճանաչելի բառեր՝ դերանուններ»³, Եվ Աճառյանը վկայում է, որ այժմ էլ կան լեզուներ, որոնցում դերանունների այս նախավիճակը պահպանված է մինչև այսօր: Օրինակ, հայերենում հաճախ ԴՈՒ ասելու փոխարեն ասում են նրամախդ, կամ գերմաներենի mann մարդ գոյականից է առաջացել man անորոշ դերանունը, կամ պարսկերենում հաճախ ԾՍ-ի փոխարեն գործածում են banda (ծառա) գոյականը և այսպիսի բազմաթիվ օրինակներ է բերում Աճառյանը ցույց տալու համար, որ աշխարհի շատ լեզուներում դերանուններ չկան, որոշ լեզուներում էլ դրանք գոյություն ունեն գոյականներին զուգահեռ, այսինքն՝ հետո են առաջացել: «Ցապոներենում դերանունները քիչ են և անգործածական,— գրում է Աճառյանը,— նրանց տեղ դրվում են զանազան գոյականներ»: Եվ բազմաթիվ լեզուներից բերվող փաստերի հիման վրա Աճառյանը ավելի է հաստատում իր միանգամայն ճիշտ տեսակետը. «Այս բոլորը ցույց են տալիս, որ դերանունները նախապես սովորական գոյականներ էին»⁴:

Իր այս տեսությունից էլ մեծ լեզվաբանը բխեցնում է դերանվան հետ կապված մեկ ուրիշ, թերևս շատ ավելի կարևոր հարց. դա այն է, թե դերանունը պե՞տք է առանձին խոսքի մաս համարել, թե՞ տարաբաշխել առանձին խոսքի մասերի վրա: Ինչպես հայտնի է, լեզվաբանական գրականության մեջ այս հարցը նույնպես տարակարծությունների տեղիք է տվել և մինչև այսօր էլ դեռ վիճահարույց է. «Որոշ լեզվաբաններ, ելնելով նրանից, որ դերանունները շունեն քերականական հատկանիշների ընդհանրություն կամ միասնություն, որ նրանց տարբեր խմբերը տարբեր խոսքիմասային առանձնահատկություններ են երևան հանում, լուծարում են դերանունը որպես խոսքի մաս՝ տեղաբաշխելով՝ գոյականի, ածականի (թվականի) և մակբայի մեջ: Հարցն այս ձևով է լուծում, օրինակ, ռուս քերականության մեջ Ա. Պեշկովսկին, հայ քերականության մեջ՝ Մ. Արեղյանը»⁵: Դերանվան վերաբերյալ նման մոտեցում կա նաև այժմ. 1980 թ. լույս տեսած ռուսական ակադեմիական քերականությանը (բ. գ. դ. Մ. Յու. Շվեդովայի խմբագրությամբ), դերանունը չի առանձնացնում որպես առանձին խոսքի մաս⁶:

Դերանունները առանձին խոսքի մաս համարելու հարցում ակադեմիկոս Աճառյանի մոտեցումը նույնպես ճիշտ է ու գիտական. նա շատ լավ էր հասկանում դերանունների՝ տարբեր խոսքի մասերին հարաբերակից լինելը, բայց, նրանցում ընդհանրությունների նույնականություն չլինելու պատճառով, դրանք չէր նույնացնում: Եվ ինչպես իրավացիորեն ապացուցում է ակադեմիկոս Ս. Արրահամյանը, «Քերականական ընդհանրություններ չկան դերանունների ու (դրանց) հարաբերակից խոսքի մասերի միջև»⁷: Հարցին նման մոտեցում ունի դեռևս 1952-ին լույս տեսած ռուսական ակադեմիական քե-

² Ա. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի (համեմատությամբ 562 լեզուների), հատ. 2-րդ, Երևան, 1954, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 1:

⁴ Նույն տեղում, էջ 5:

⁵ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հատոր Բ, Երևան, 1973, էջ 105:

⁶ Слово Русская грамматика, том 1, М., 1980, էջ 531, 541, 573, 703:

⁷ Ս. Գ. Արրահամյան, Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956, էջ 46:

րականությունը՝ ակադեմիկոս Վ. Վինոգրադովի խմբագրությամբ, որտեղ, ի տարբերություն 1980 թվականին հրատարակվածի, գրված է. «Դերանունները առանձնացվում են մի առանձին խմբի մեջ ոչ այնքան ձևաբանական կառուցվածքի կամ շարահյուսական կիրառությունների միասնությամբ, որքան իմաստային ընդհանուր հատկանիշներով»:

Դերանունը համարելով առանձին խոսքի մաս և նրան փոխարինման հատկանիշ վերագրելով, Աճառյանը այն համարում է ամենաընդհանրական բառ և նշում, որ դերանունը զուրկ է նյութական նշանակությունից, որ այն ամբողջապես անորոշություն է և որևէ կապակցության մեջ միայն կարող է նշանակել այսինչ առարկան կամ այսինչ հատկանիշը. «Աշխարհիս անցյալ, ներկա և ապագա միլիարդավոր բնակիչները կարող են ասել ԵՄ, և այս բառը կարող է նշանակել այդքան անհատ: Բոլոր այդ միլիարդավոր բնակիչները կարող են ասել ԻՄ կամ ԻՄԸ և նշանակել իրենց մի թել մազից սկսած մինչև իրենց ամբողջ երկիրը: Նրանք կարող են ասել ԱՅՍ և ցույց տալ խոտի մի թելից սկսած մինչև աստղերը, հորիզոնն ու արեգակը»:

Քանի որ Աճառյանը դերանվան փոխարինման ֆունկցիան կապում էր միայն գոյականի հետ, դերանունների իր ընդունած ութ տեսակներից կական կամ անձնական (ես, դու, նա, մենք, դուք, նրանք), անդադարձ (ինքը), փոխադարձ (իրար, միմյանց, մեկմեկու), ցուցական (սա, դա, նա, այս, այդ, այն, սույն, նույն), ստացական (իմը), հարցական (ո՞վ, ի՞նչ, ո՞ր, քանի՞), հարաբերական (որ), անորոշ (մեկը, ոմն, մյուսը, ուրիշ, շատերը, ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ, որևէ, որևիցե, յուրաքանչյուր այլն), դրա համար էլ գոյականներին փոխարինող անձնականը, անդադարձը, փոխադարձը և հարաբերականը միշտ գոյակաձևներ է համարում (իր բառերն են), իսկ մյուս շորս տեսակները՝ ըստ իրենց գործածության, կարող են լինել թե՛ ածական, թե՛ դերանուն՝ նայած թե ինչ խոսքի մասի հետ են կիրառվում (Այս գիրքը նոր է — ածական: Այս նոր է — դերանուն):

Դժվար չէ նկատել, որ Աճառյանի՝ դերանվան մասին ունեցած հայացքներից շատերը տարբերվում են ժամանակակից քերականություններում ընդունված տեսակետներից, բայց դա մոտեցման հարց է, և Աճառյանը այդպես էր ընդունում դերանուն խոսքի մասը:

Դերանվան այս ընդհանուր հարցերը քննարկելուց հետո Աճառյանը անդրադառնում է դերանունների հետ կապված մասնավոր հարցերի՝ նրանց յուրահատուկ ֆեռականական կարգերի ուսումնասիրմանը:

«Դերանունները, — գրում է Աճառյանը, — գոյականների նման ունեն երեք քերականական կարգեր՝ թիվ, հոլով և սեռ, բայց այս երեքից դուրս՝ անձնական և ցուցական դերանուններն ունեն նաև դեմք, որով զանազանվում են գոյականից: Դեմքը դրանց հիմնական հատկությունն է»¹⁰:

Դեմքի քերականական կարգի մասին Աճառյանը շատ հետաքրքրական տեղեկություններ է տալիս՝ կապված աշխարհի շատ լեզուների հետ: Տալիս է նախ բառի ստուգաբանությունը, որ դեմք անվանումը եվրոպական լեզուներում լատինական persone բառն է, որը թատերական տերմին է և ցույց է տալիս այն դերը, որ կատարում են գործող անձինք խոսակցության մեջ՝ խոսող, խոսակից և երրորդ անձ, որոնք արտահայտվում են ես, դու, նա դերանուններով և սրանց հոգնակի ձևերով. այսպես է աշխարհի շատ լեզու-

⁸ Грамматика русского языка, т. 1, под ред. акад. В. Виноградова, М., 1952, էջ 29:

⁹ 2. Աճառյան, Եզ. աշխ., էջ 5:

¹⁰ Նույն տեղում, էջ 7:

ներում: Բայց Աճառյանը մի հետաքրքիր փաստ է նշում, որ որոշ լեզուներ
երրորդ դեմքի համար ունեն երկու ձև՝ հերկա և բացակա (բացակա երրորդ
դեմքը նա է, որի մասին խոսվում է՝ առանց չբան տեսելու): Աճառյանը
գրում է, որ հաճախ է նախադասության մեջ խոսք լինում երկու բացակա
երրորդ անձերի մասին, և այդ անձերը շփոթվում են, չի հասկացվում, թե
խոսքը ում մասին է. նման դեպքերի համար Աճառյանը բերում է հետևյալ
օրինակը՝ «Լեռնը տեսավ հարևանին իր եղբոր հետ և սկսեց խոսել նրա հետ»:
Այստեղ անորոշ է մնում երկու բան. նախ՝ հայտնի չէ, թե հարևանի՞ եղ-
բորն է տեսել Լեռնը, թե՞ իր, և երկրորդ՝ թե Լեռնը հարևանի՞ հետ է սկսել
խոսել, թե՞ եղբոր: Կամ՝ «Հովհաննեսն ասաց Ռուբենի որդուն, թե նա պետք
է օգնի նրան» նախադասության միտքը ըստ Աճառյանի կարելի է վեց ձևով
հասկանալ՝ 1) Հովհաննեսը պիտի օգնի Ռուբենին: 2) Հովհաննեսը՝ Ռուբենի
որդուն: 3) Ռուբենը՝ Հովհաննեսին: 4) Ռուբենը՝ որդուն: 5) Որդին՝ Հովհան-
նեսին և 6) Որդին՝ Ռուբենին:

Այստեղ Աճառյանը նշում է, որ որոշ լեզուներում, օրինակ շիպպեվեյ
լեզվի մեջ, այդ ձևերի համար կան առանձին դերանուններ կամ ձևեր:

Անձնական դերանվան դեմքի հետ կապված Աճառյանը մի շատ հետա-
քրքրական նկատառում ևս ունի, որը լայնորեն նշվում է ժամանակակից
ոճաբանության մեջ տրամաբանական շոբոնոլ դեմք անվանումով¹¹:

Սրա վերաբերյալ Աճառյանը գրում է. «Երբ նախադասության մեջ խոսք
է լինում մի երրորդ անձի մասին և հետո էլ՝ մի ուրիշ անձի մասին, հաճախ
այդ երկուսի դերանունները շփոթվում են իրար հետ և չի հասկացվում, թե
խոսքը ում մասին է. հենց դա էլ Աճառյանը կոչում է շոբոնոլ դեմք և բերում
է վերոհիշյալ օրինակը՝ «Լեռնը տեսավ հարևանին իր եղբոր հետ...»¹²:

Դերանվան դեմքի քերականական կարգի հետ կապված Աճառյանը խո-
սում է նաև որոշ լեզուներում ներառյալ և բացառյալ դեմքերի (նկատի ունի
խոսող և խոսակից), ինչպես նաև շափահասի և անշափահասի դիմային տար-
բերությունների մասին: Այս վերջինի վերաբերյալ ասում է. «Սա մոտավո-
րապես նման է անգլերենին, ուր երրորդ դեմքի դերանունն է he (մեծերի
համար) և it փոքրերի, երեխաների, ինչպես նաև իրերի և անասունների
համար»¹³:

Աճառյանը բերում է նաև այնպիսի լեզուներ, որոնցում կա միայն 2
դեմք՝ ես և դու, իսկ երրորդ դեմքի փոխարեն գործածում են ցուցական դեր-
անուններ (մոնղոլերեն, կայմիկերեն և ամերիկյան որոշ լեզուներ):

Խոսելով հայերենի երրորդ դեմքի երկու դերանունների մասին՝ նա և
ի՞նք, Աճառյանը նշում է, որ սրանց հոլովված ձևերը հաճախ խոսքի մեջ
շփոթ են առաջացնում: Եվ իսկպես, դա այդպես է. օրինակ «Տիգրանն ա-
սաց, որ Աշոտը գնացել է իրենց տուն և վերցրել է իր նվազարկիչը» նախա-
դասության մեջ դժվար է հասկանալ, թե Աշոտը ում տունն է գնացել՝ Տիգ-

¹¹ Տե՛ս Յ. Խղաթյան, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Երևան, 1976,
էջ 87: Նույնի՝ Հայոց լեզվի ոճաբանության ծրագիր, Երևան, 1966, էջ 10:

Այս բառարանում կարդում ենք՝ ՉՈՐՐՈՐԴ ԴԵՄՔ— Դերանունների երրորդ դեմքի առանձ-
նահատուկ կիրառությունը երրորդ անձից հետո խոսքին աննշվող, իբրև շորրորդ գիտակցվող
անձնավորությունը ցույց տալու համար: Օրինակ՝ «Ես Արամին պատմեցի նրա վիճակը», «Նա
դանդաղ մոտեցավ և ձեռքի թևն հպումով շոյեց նրա ոսկեգույն մազերը»: Երկրորդ նախա-
դասության մեջ նա և նրա երրորդ դեմքի դերանուններ են, բայց «Նրա ոսկեգույն մազերը»
կապակցության մեջ նրա բառը չի ցույց տալիս այն անձնավորությունը, որ արտահայտված է
նա բառով, ուստի տրամաբանորեն գիտակցվում է իբրև «շորրորդ» դեմք:

¹² Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 19:

¹³ Նույն տեղում, էջ 19:

բանե՞նց, թե՞ Աշոտենց և ում նվագարկիչն է վերցրել՝ Տիգրանի՞, թե՞ Աշոտի։
 ԹՎԻ քերականական կարգը Աճառյանը նույնպես քննում է բազմաթիվ լեզուների առնչակցությամբ և գրում է, որ գոյականների նման դերանունն էլ ունի ընդհանրապես երկու թիվ՝ եզակի և հոգնակի, բայց միևնույն ժամանակ նշում է, որ կան լեզուներ էլ (օրինակ արաբերենը), որ ունեն երկակի թիվ (մենք երկուսս), ուգրո-ֆիննական լեզուներում երեք դեմքի համար էլ կա երկակի թիվ (մենք երկուսս, դուք երկուսդ, նրանք երկուսը)։ Նշում է, որ մեխանիկական լեզուներում կա նաև եռակի թիվ (triiial), իսկ միկրոնեզյանում ավելանում է նաև քառակին (cuatrial). սրանց լեզվում հոգնակին ըսկըսվում է հինգից։

«Սրանց հակառակ,— գրում է Աճառյանը,— յավայերենում դերանունը թիվ չունի. «ես» և «մենք», «դու» և «դուք», «նա» և «նրանք» միևնույն բաներն են»¹⁴։ Եվ ավելացնում է, որ նման բան Ա. Մեյեն նկատել է ֆրանսերենի որոշ տարածքի խոսվածքում, որտեղ մենք (nous) դերանվան փոխարեն օգտագործում են ես (je) դերանունը։ Այսպես՝ փոխանակ ասելու Nous aimons Մենք սիրում ենք, ասում են՝

Je aimons ՆՍ սիրում ենք։

Ամերիկյան որոշ լեզուներում էլ (գալիերի) անձնական դերանվան հոգնակիի համար օգտագործում են բարո բարո բարո՝ առաջին, երկրորդ, երրորդ դեմքերի եզակիների հետ՝ Մենք— au բարո

Դուք— amore բարո

Նրանք— moce բարո

Աճառյանը հետաքրքրական դիտարկումներ ունի նաև անձնական դերանունների ֆաղափավարական ձևերի գործածության վերաբերյալ, երբ եզակի անձին դիմում են հոգնակի դերանվամբ։ Նա գրում է, որ հին հույները և հայերը չունեին այդ ձևերը և նույնիսկ աստվածներին և թագավորներին դիմում էին ԴՈՒ-ով, այս ավելացնում, որ քաղաքավարության համար հոգնակի ձևերի գործածելը մտավ հոռմայեցի կայսրերից. սրանք իրենց ծերակույտի անունից կամ եռապետակիցների կողմից խոսելիս ասում էին մենք. դիմողներն էլ, երբ դիմում էին կայսեր, քնականաբար նկատի ունեին նրա եռապետակիցներին կամ ծերակույտին և դիմում էին դուք-ով։ Այս երևույթը աստիճանաբար մեծ տարածում ստացավ Եվրոպայում, նույնիսկ՝ Արևելքում։ Այժմ քաղաքակիրթ ժողովուրդների մեջ լայն տարածում ունի եզակի 2-րդ դեմքի փոխարեն հոգնակի 2-րդի՝ Իսիք, Ձեք, Ձեզ օգտագործումը (ֆրանսիացին իր որդուն դիմում է դուք-ով, որդին հորը՝ ԴՈՒՔ-ով։ Ամուսինը կնոջը տանը դուք-ով է դիմում, հասարակության մեջ՝ ԴՈՒՔ-ով)։ Այսպես է նաև սլավոնական որոշ ժողովուրդների մոտ։ Աճառյանի վկայությամբ կան լեզուներ էլ, որտեղ ընդհանրապես իրենցից փոքրերին դիմում են եզակիով, մեծերին՝ հոգնակիով։ Իսկ անգլերենում նույնիսկ կենդանիների հետ դուք-ով են խոսում։ Նույնը նաև հուլանդացիները. նրանք ջնջել են դուք ձևը և դրա փոխարեն գործածում են ՚իայն դուք, իսկ քաղաքավարության համար այլ ձևավեր ունեն։

ԴԵՐԱՆՎԱՆ ՍԵՌԻ քերականական կարգը շատ ավելի հետաքրքիր է ու բազմազան դրսևորումներ ունի տարբեր լեզուներում։ Աճառյանը գրում է, որ գոյականների նման դերանուններն էլ կարող են ունենալ 3—4 սեռ՝ առական, իգական, շեզոք և հասարակ, բայց դա բոլոր լեզուների համար պարտադիր չէ. կան լեզուներ, որոնցում դերանունը բոլորովին սեռ չունի, որոշ լեզուներում էլ այն վերացել է, ջնջվել։

¹⁴ Նույն տեղում, էջ 9։

Դերանվան սեռի տեսակետից ամենազարգացած լեզուն Աճառյանը համարում է հոտենդոտյան նամա լեզուն, որտեղ եզակի, երկակի, հոգնակի թվերի համար, բացի եզակի առաջին դեմքից, կա արական, իգական և շեզոֆ սեռ: Սեմական լեզուներից շատերում (բերայցերեն, ասորերեն, արաբերեն) դու, նա և դուք, նրանք դեմքերի համար ունեն թե արական և թե իգական ձևեր: Հին եգիպտերենը և արխագերենը եզակի երկրորդ դեմքի համար ունեն արական և իգական, իսկ երրորդ դեմքի համար՝ նաև շեզոֆ սեռ: Իսկ եվրոպական գրեթե բոլոր լեզուները (քիչ բացառությամբ) սեռը զանազանում են միայն երրորդ դեմքում: Կան լեզուներ էլ, ինչպես հայերենը, որտեղ դերանունները սեռ չունեն:

Ըստ Աճառյանի՝ սեռի զարգացումը դերանունների հարցում գնում է հետևյալ ճանապարհով.

«Առաջին դեմքի եզակին ոչ մի լեզվում չունի սեռ. խոսողը կարիք չունի ներկայացնելու իր սեռը, որովհետև խոսակիցը նրան տեսնում է և լսում: Նույն պատճառաբանությամբ էլ, — գրում է Աճառյանը: — երկրորդ դեմքն էլ սեռի խտրություն չպետք է ունենար, — այդպես է լեզուների մեծագույն մասում, բացի սեմական լեզուներից, եգիպտերենից և արխագերենից»¹⁵:

Եթե անձնական դերանվան առաջին և երկրորդ դեմքերի համար սեռի անհրաժեշտություն իսկապես չկա, ապա երրորդ դեմքի հարցում Աճառյանն էլ է ընդգծում, որ սեռը շատ կարևոր է. «Խոսողության մեջ երրորդ դեմքը հաճախ բացակա է, և կարևոր է որոշել նրա սեռը, թեկուզ իմանալու համար, թե ում մասին է խոսքը: Դրա համար էլ երրորդ դեմքը շատ լեզուներում զանազանում, որոշում են սեռով, երբեմն արական, իգական և շեզոֆ, երբեմն էլ միայն՝ արական և իգական»¹⁶: Եվ իսկապես, երրորդ դեմքի սեռի հարցի որոշումը այնքան կարևոր է համարվել, որ եվրոպական որոշ լեզուներ, որ գոյականների և ածականների համար ջնջել են սեռի գաղափարը, բայց դերանվան եզակի երրորդ դեմքի համար այն պահել են. որպես օրինակ Աճառյանը բերում է դանիերենն ու անգլերենը, որոնք երրորդ դեմքի համար ունեն արական, իգական և շեզոֆ: Գերմաներենում և ֆրանսերենում նույնպես դրանք զանազանում են, իսկ շվեդերենում նա դերանունը 4 սեռ ունի՝ արական, իգական, իրական և շեզոֆ, բայց հոգնակիի համար մեկ ձև ունի: Ռուսերենում նույնպես պահպանված է եզակի երրորդի արական (ОН) և իգական (ОНА), իսկ հոգնակիի իգականը (ОНЕ) վերացել է և մնացել է միայն ОНН երկու սեռերի համար էլ:

Աճառյանը գրում է, որ մինչև անգամ հայերենում եզակի երրորդ դեմքի համար հորինվել է նե իգականը, սակայն չի ընդունվել¹⁷:

¹⁵ Նույն տեղում, էջ 11:

¹⁶ Նույն տեղում, էջ 12:

¹⁷ Այդպիսի պատմության մեջ հայտնի է լեզվաբան Գրիգոր Վանցյանի տեսությունը այս հարցի վերաբերյալ. նա գրում է, որ հայերենում գոյականներից շատերի համար էլ կա սեռի տարբերակում՝ տղամարդ—կին, տղա—աղջիկ, եղ—կույ, խոյ—մարի, աքլոր—հավ և այլն: Անձնական դերանվան երրորդ դեմքի սեռի համար գրում է, որ հայերենում դեռևս հինգերորդ դարից իգական երրորդի համար ստեղծվել է նե դերանունը. այն գործածել է Դավիթ Անհաղթը. այն սիրով ընդօրինակել է Պետրոս Գուրյանը (նե հեռացավ ինձմեք, ըստ՝ «Բավ սիրեցի քեզ, մնաս բարյավ»): Վանցյանը սուղաբարկում է խոսքում (հատկապես գրավոր) գործածել ոչ միայն արական և իգականի ուղիղ ձևերը՝ նա և նե. այլև դրանք թեք ձևերը՝ արական— նա, նրա, նրանից, նրանով, իգական— նե, նորա, նորանից, նորանով: Եվ իգականի այս երրորդ սեռի տարբերակման անհրաժեշտությունը ցույց տալու համար նա գերմաներենից մի նամակ է Բարգմանում, որը հայերենում երրորդ դեմքի սեռերի շփոթ է առաջացնում. չի հասկացվում:

Սեռի քերականական կարգի մասին Աճառյանը գրում է, որ լեզուների զարգացման ընթացքում դերանունների սեռը աստիճանաբար վերանում է. մնում են միայն եզակի երրորդի սեռային ձևերը, իսկ հոգնակի երրորդի ձևերը արդեն վերանալու ճանապարհին են, կամ վերացել են:

Դերանունների սեռի հետ կապված Աճառյանը խոսում է նաև լեզուներում (ամերիկյան, դրավիդյան և այլն) գոյություն ունեցող դերանվան շրջափոխի և անշունչի սեռային տարբերակման մասին:

Դերանունների քերականական կարգերի քննությունից հետո Աճառյանն անդրադառնում է նաև աշխարհի բազմաթիվ լեզուների դերանունների հետ կապված բազմաթիվ ու բազմապիսի հետաքրքրական հարցերի, որից հետո միայն առանձին-առանձին քննում է դերանունների՝ իր ընդունած 8 տեսակները, խոսում տարբեր լեզուներում դրանց առկայության, քերականական կարգերի մասին, ավելի հանգամանորեն քննում հայերենի դերանունները՝ իրենց պատմական զարգացման ընթացքի մեջ:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ.— Նշում է, որ սրանց ամենափոքր թիվը վեցն են՝ ես, դու, նա, մենք, դուք, նրանք (հայերենում, թուրքերենում, վրացերենում), պարսկերենում ավելանում է մեկով՝ հոգնակի երրորդ դեմքում տարբերակվում է նշնավորի և անշունչի առումը: Եվրոպական լեզուներում դրանց թիվը հասնում է ութի, արաբերենում՝ տասներկուսի: Անձնական դերանունների թիվը ավելի է բարձրանում այն լեզուներում, որոնք բացի սեռից ու երկակից ճանաչում են նաև ներգործակալն ու շեզոֆ, ներառյալ և բացառյալ և այլն: Ամենահարուստ լեզուն, նշում է Աճառյանը, ունի մինչև 24 անձնական դերանուն (հայերենի 6-ի դիմաց): Բավականին հանգամանորեն խոսում է նաև տարբեր լեզուներում գոյություն ունեցող անձնական դերանունների բազմապիսի ձևերի գոյության ու գործածության մասին: «Քաղաքավարական ձևերը,— գրում է Աճառյանը,— իրենց ծայրահեղ աստիճանին են հասնում Հեռավոր Արևելքի լեզուների մեջ, ուր բազմաթիվ ձևեր կան առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի համար՝ համաձայն խոսողների սոցիալական դիրքին, տարիքին և այլ հանգամանքների. իշխանավորների ու տարիքավոր մարդկանց հետ խոսելիս ուրիշ դերանուններ են գործածում, հավասարների հետ՝ ուրիշ, ստորադրյալների հետ՝ բոլորովին ուրիշ»¹⁸:

Անձնական դերանունների սաստկական ձևերի մասին խոսելիս Աճառյանը նշում է, որ նման ձևեր ունեն բազմաթիվ լեզուներ. հայերենը՝ ես՝ ինես, դու՝ ինքդ, նա՝ ինքր..., ռուսերենը՝ я сам, ֆրանսերենը՝ moi-même, իտալ. stesso, գերմ. selbst, անգլ. self, պարսկ. man և այլն: Նշում է, որ կան նաև լեզուներ, որտեղ սաստկական ձևերի համար կան դերադրական մասնիկներ, որոնք կցվում են անձնական դերանվանը, իսկ որոշ լեզուներում էլ անձնական դերանունը սաստկացնելու համար նրան ավելացնում են գլուխ, մառմին բառերը, մեկ ուրիշ լեզվում դա կատարվում է դերանունների կրկնությամբ, մի այլ տեղ՝ շարահասություններ և այլն¹⁹:

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ Աճառյանը կոչում է նաև ածական, որով մատնանշվում է այն անձը կամ առարկան, որի մասին խոսվում է, և գրում է, որ զարգացած լեզուներում դրանցով նշվում է առարկան կամ անձը՝ ըստ խոսողի նկատմամբ ունեցած հեռավորության: Ընդգծում է նաև, որ շատ լեզուներում ցուցական դերանունները առարկաները տարբերակում են ըստ

ով է տղան, ով՝ աղջիկը: (Տե՛ս Գր. Վանցեան, Պատմական քերականութուն արևելահայ լեզուի, Քիֆլիս, 1906):

¹⁸ Ա. Աճառյան, նշվ. աշխ., էջ 89:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, 104—111:

տեղի, հեռավորութեան, ժամանակի, տեսանելի և անտեսանելի լինելու, ներկա և բացակա դառնալու, նաև՝ առարկաների դիրքը՝ կենտրոնում, դիմացը, վերևում, ներքևում, աջում, ձախում, բարձրում, ցածրում և այլն:

«Ցուցականի համար ամենաթույլ լեզուն, — գրում է Աճառյանը, — աֆրիկյան սարա լեզուն է, որն ունի միայն մեկ ցուցական, որ հավասարապես գործածվում է երեք դեմքերի և՛ եզակի և՛ հոգնակի թվերի համար»²⁰: Սրանց հակառակ Աճառյանը գրում է, որ սեռ ճանաչող լեզուներում ցուցականների թիվը շատ է ավելանում (ЭТОТ, ЭТА, ЭТО), երբայց երևին էլ զանազանում է երկու տեսակ ցուցական. 1) երբ բոլորովին նոր անձ կամ նոր առարկա է, 2) երբ անձը կամ առարկան արդեն ծանոթ է²¹:

Ցուցականի համեմատական քննությունից հետո Աճառյանը այն քննում է հայերենում. «Հայերենի ցուցականները կազմում են երեք շարք, որոնք իրար հետ կատարելապես զուգահեռ են գնում: Բոլորի հիմնական տարրն են կազմում ս, դ, ն. ս — մերձավորագույն առարկայի համար, որ խոսողի մոտն է, դ — ավելի հեռու առարկայի համար, որ խոսակցի մոտն է, ն — հեռագույն առարկայի համար, որ երրորդ դեմքի մոտն է»²²: Եվ Աճառյանը գրում է, որ այս երեք ցուցիչներից են կազմվել հայերենի դիմորոշ, ստացական և ցուցական հոդերը (ս, դ, ն), որոնք հետադաս են և անփոփոխ: Նա դրանք համարում է արմատական ձևեր, որոնք առաջացած է համարում անձնական ես, դու, նա դերանուններից և բերում է Մեյլի տեսությունը²³: Այնուհետև Աճառյանը նշում է, որ հայերենի բոլոր ցուցական դերանունների հիմքում (այս, այդ, այն, սա, դա, նա, սույն, նույն և այլն) ընկած են այդ երեք արմատական տառերը:

Ավելի շատ հետաքրքրություն են ներկայացնում աշխարհի լեզուների ՍՏԱՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ, որոնց քննությունը Աճառյանը հատկացրել է 146 մեծադիր էջեր: Նա ստացական դերանուն է համարում այն բառը, որ ցույց է տալիս, թե այսինչ առարկան երեք (կամ ավելի) դեմքի դերանուններից ում է պատկանում, հետևաբար այն ցույց է տալիս պատկանելիություն: «Եվ որովհետև պատկանելիությունը գլխավորապես արտահայտվում է սեռական հոլովով, ուստի ստացական դերանուններն էլ անձնական դերանունների սեռականներն են՝ լեզուների մեծ մասի մեջ»²⁴ (որոնք հոլովներ ունեն), Իսկ այն լեզուները, որոնք հոլով չունեն, կամ չունեն սեռական, դրանց մի մասում անձնականի վրա որոշ դասանիշներ (հոդեր՝ ս, դ, ն, տ, է, զ) կամ սեփականություն նշանակող բառեր են ավելանում, կամ ստացականությունը որոշվում է շարադասությամբ՝ անձնականը դրվելով գոյականից հետո (sunda ma — ձի իմ, bise yi — շուն քո, kuya zi դանակ նոցա): Այս օրինակը Աճառյանը բերում է աֆրիկյան ուտա լեզվից²⁵: Աճառյանը բերում է նաև դասեր և սեռեր ունեցող բազմաթիվ լեզուներ, որոնցում ստացականությունը արտահայտվում է բազմաթիվ ձևերով, որոնց թիվը կարող է հասնել 156—780: Այսպիսով ստացվում է ստացականների մի մեծ թիվ, գրում է Աճառյանը²⁶:

Աճառյանը գրում է, որ կան լեզուներ էլ, որոնցում ստացականը զանազանվում է ըստ այն բանի, թե առարկան շնչավոր է, թե անշունչ, բաժա-

²⁰ Նույն տեղում, էջ 139:

²¹ Նույն տեղում, էջ 142—143:

²² Նույն տեղում, էջ 173:

²³ Նույն տեղում, էջ 180—184:

²⁴ Նույն տեղում, էջ 241:

²⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 247:

²⁶ Նույն տեղում, էջ 250:

նելի է, թե անբաժանելի, տեսանելի է, թե անտեսանելի, մոտ է, թե հեռու և այլն:

Հայերենի ստացական դերանունների համար Աճառյանը գրում է, որ գրաբարում դրանք իմ, քո, մեր, ձեր, իր դերանուններն են «Բոլորն էլ անձնական դերանունների սեռականներն են՝ անկախ բառ դարձած և առանձին հոլովման ենթակա (ընդգծումը մերն է — Ն. Բ.): Դրանք նույնությամբ պահպանվել են միջին հայերենում, իսկ որոշ բարբառներում դրանց ավելացել են նաև այլ դերանուններ: Այդ նույն դերանունները Աճառյանը համարում է նաև աշխարհաբարի ստացականներ, սակայն «արդի հայերենում դերանվան այս տեսակի գոյությունը վաղուց մերժված է քերականների կողմից»⁷⁷: Այժմ դրանք անկախ բառեր չեն:

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԵՎ ՓՈՒՆԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ Աճառյանը քննում է միասին և գրում է, «Անդրադարձ կոչվում է այն դերանունը, որը ցույց է տալիս, որ անձնական դերանվան կատարած գործողությունը անցնում է հենց նույն անձնական դերանվան վրա. օր. Նա իր համար է առել»⁷⁸: Եվ ավելացնում է, որ բոլոր լեզուները չէ, որ ունեն այդ դերանունը, այն շունեցողները դրա փոխարեն հարկ եղած դեպքում գործածում են զանազան գոյականներ՝ սիրտ, մառմին, գլուխ և այլն. ինչպես վրացերենում՝ «թավս իկլավս — գլուխը սպանում է = իրեն սպանում է: Կամ «չեմս քավս վափասեք — իմ գլուխը գնահատում եմ = ես ինձ գնահատում եմ»:

«Անդրադարձ դերանուն կազմելու մի ուրիշ ձևն է անձնական դերանվան կրկնությունը, որ հատուկ է նաև հայերենին՝ ես իճես, դու իճեդ, մեճ իճեճես, դուճ իճեճերդ»⁷⁹: Սակայն հայտնի է, որ հայերենում անդրադարձ դերանուններ չկան, և Աճառյանի նշածները անձնական դերանուններ են:

Փոխադարձ դերանվան մասին Աճառյանը գրում է, որ այն անդրադարձի փակառակ է և իրեն հատուկ մանրակրկիտությամբ քննում է միմյանց, իրար, մեկմեկի դերանունները, որոնք նույնությամբ կան նաև ժամանակակից հայերենում:

Աճառյանը ՀԱՐՑԱԿԱՆ համարում է ո՞վ, ի՞նչ, ո՞ր, քանի՞ դերանունները, որոնցից վերջին երեքը համարում է նաև ածականներ:

ՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ Աճառյանը համարում է միայն ուր բառը, որը գործածվում է որպես գլխավոր և երկրորդական նախադասությունների կապի միջոց և գրում է, որ ինչպես հնդեվրոպական շատ լեզուներում, այն զնալով կորչում է, և նրա փոխարեն գործածվում է հարցականը, բայց միևնույն ժամանակ նշում է, որ հայերենի մի շարք բարբառներում կան դրա տարբեր տեսակները:

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ շարքը Աճառյանը դասում է մոտ 20 բառ, որոնցից մի քանիսը այժմ դիտվում են որպես ուրախալ, ժխտական և նույնիսկ ցուցական: Նա դրանց մի մասը համարում է և՛ դերանուն և՛ ածական և ավելացնում է, որ հնդեվրոպական լեզուները հարուստ չեն անորոշ դերանուններով⁸⁰:

Այսպիսին է հայ լեզվաբանության զարմանալի հանճարի՝ ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի ըմբռնումը դերանուն խոսքի մասի վերաբերյալ, որը կատարված է պատմահամեմատական մանրազնին քննությամբ և բազմաթիվ լեզուների իմացությունից: զարմանալի խորաթափանցությամբ:

⁷⁷ Ս. Գ. Արքաճամյան, Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956, էջ 86:

⁷⁸ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 112:

⁷⁹ Նույն տեղում, էջ 115:

⁸⁰ Նույն տեղում, էջ 406—429:

Х. Г. БАДИКЯН — Ачаряновское понимание местоимения. — В ряду капитальных трудов выдающегося языковеда академика Грачья Ачаряна основополагающее место занимает 10-томная «Полная грамматика армянского языка в сравнении с 562 языками», не имеющая аналога в мировой лексикографии. Второй ее том полностью посвящен части речи «местоимение». Здесь местоимение исследуется в его историческом развитии на общем языковедческом фоне, в сравнительно-историческом плане. Подробно изучены местоимения габара, среднеармянского, диалектов, двух ветвей ашхарабара—западно- и восточноармянского. Ученый прослеживает возникновение местоимения, его выделение в часть речи, его основные функции, четко формулирует группы и категории.